

Պարգևատրվել է ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով

14.08.2015թ.



Այսօր ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը պետական ծառայության ոլորտում երկարատև և բարեխիղճ աշխատանքի համար, վաստակած հանգստի անցնելու կապակցությամբ ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել է Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության հաշվապահ-առաջատար մասնագետ Սոնիկ Սարգսյանին:

Մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնի պետ Ա. Շահնազարյանը և Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ Յու. Մնացականյանն իրենց երախտագիտությունը հայտնեցին սոցիալական ոլորտում համատեղ աշխատանքի, ինչպես նաև հոգատար վերաբերմունքի ու մասնագիտական նվիրվածության համար՝ մաղթելով առողջություն և հաջողություններ: